ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 23-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Սահմանել՝ հանրային հեռարձակողի խորհրդի անդամի մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2020թ.

«____»____-ի N ____-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հանրային հեռարձակողի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամի թափուր տեղի համալրման մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման ընթացակարգը:

2. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն ՁԼ 1-ի,

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն,

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն,

4) ինքնակենսագրություն՝ համաձայն ՁԼ 2-ի,

5) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր՝ գիտական, ստեղծագործական աշխատանքներ, հրապարակումներ կամ դրանց ցանկը (առկայության դեպքում),

6) ուղեկցող նամակ (հակիրճ ներկայացվում է այս պաշտոնով հետաքրքրվածության պատճառները, հանրային հեռարձակողի զարգացման հայեցակարգը (մինչև 5 էջ) և դիմումատուի այն հմտությունները, որոնք, նրա կարծիքով, անհրաժեշտ են տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար,

7) 2 լուսանկար՝ 3x4 չափսի,

8) հայտարարություն՝ համաձայն ՁԼ 3-ի:

3. Փաստաթղթերը 5 օրինակից ներկայացվում են Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ մրցույթի անցկացման մասին հայտարարելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն քննարկվում:

_

ՁԼ 1

Հեռուստատես
հանձնաժողով

_____
(անուն, ազգան

ԴԻՄՈՒՄ

Խորհրդի անդամի մրցույթին մասնակցելու վերաբերյալ

Դիմումատուի անուն, ազգանուն
_____

Հաշվառման հասցեն
_____

Հեռախոսահամարը, էլ. հասցեն
_____

Կից փաստաթղթեր.

1. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն _ _____ թերթ,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն _____ թերթ,

3. ինքնակենսագրություն _____ թերթ

4. ուղեկցող նամակ _____ թերթ

5. հայտարարություն _____ թերթ
6. այլ փաստաթղթեր _____

7. 2 լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

Ընդամենը՝ _____ թերթ:

Դիմող _____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն

_____ _____ _____

(օրը, ամիսը, տարեթիվը)

_

<u>ՁԵՎ 2</u>

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անուն, հայրանուն, ազգանուն
Ծննդյան օր, ամիս, տարի
Ծննդյան վայր, երկիր
Հաշվառման բնակավայր
Մշտական բնակավայր
Քաղաքացիություն
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)

Օտար լեզուների իմացությունը.
Բանավոր.
նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, կամ բավարար, կամ լավ
Օտար լեզուների իմացությունը.
Գրավոր.
նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, կամ բավարար, կամ լավ

Ուսումնառությունը, կրթությունը.
թվել կրթօջախները, տարիները, մասնագիտացումները

Աշխատանքային գործունեությունը.
թվել աշխատավայրերը, փորձագիտական աշխատանքը, տարիները, պաշտոնները

Տեսալսողական մեդիայի, գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտներ
գործունեության փորձի նկարագիրը.
թվել հիմնարկները կամ կազմակերպությունները, տարիները, մասնագիտացումները

Վերապատրաստումները.
թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը

Այլ տեղեկություններ.
գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևներ
Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումներ

Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում հաղորդել Մրցութային հանձնաժողովին

Հեռախոսահամար
Էլեկտրոնային հասցե
Փոստային հասցե
Անհատական բլոգ կամ համացանցային էջ (առկայության դեպքում)

ՁԵՎ 3

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____-ի

անունը, ազգանունը և հայրանունը

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթներով հայտնում եմ հե

1. հայերենին _____

(տիրապետում եմ, չեմ տիրապետում)

2. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գ

_____

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

3. սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն

_____

(ունեմ, չունեմ)

4. կուսակցությունների ղեկավար մարմնի անդամ և նրա հետ փոխկապակցված անձ

_____

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

5. մասնավոր Հեռարձակողների հիմնադիր

_____

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

6. Հանրապետության նախագահ և նրա հետ փոխկապակցված անձ

_____

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

7. Կառավարության անդամ և նրա հետ փոխկապակցված անձ

_____

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

8. Ազգային ժողովի նախագահ և նրա հետ փոխկապակցված անձ

_____

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

_____ _____ _____ _____ _____

(ստորագրություն) (լրացնողի անուն, ազգանուն

(օրը, ամիսը, տարեթիվը)